ԽՈՍԵԼԻՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆԵՔ.

Ատելության
խոսքն ընդունելի
տարբերակ չէ

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԽՈՍԵԼԻՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆԵՔ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿ ՉԷ

© 2020 Եվրոպայի խորհուրդ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Եվրոպական միությունն արտոնագրված է որոշակի պայմաններով: Սույն հրատարակության որևէ մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ ձևով կամ եղանակով՝ էլեկտրոնային (լազերային կրիչ, ինտերնետ և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով, առանց Հաղորդակցության գծով տնօրինության նախնական գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int).

ԽՈՍԵԼԻՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆԵՔ.

Ատելության
խոսքն ընդունելի
տարբերակ չէ

Եվրոպայի խորհուրդ

ԻՆՉՊԵ՞Ս ԿՁԳԱՔ ՁԵԶ, ԵԹԵ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՑՈՒՅՑ ԴՆԻ ՁԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ, ԿԱՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ԴՈՒՔ ՀՈԳ ԵՔ ՏԱՆՈՒՄ, ՁՈՒՏ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ԹԵ ՈՎ ԵՔ ԴՈՒՔ: ԱՐԴՅՈՔ ՈՐԵՎԷ ՄԵԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴՐՍԵՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԶ ՆՎԱՍՏԱՑՆԵԼՈՒ ՊԱՐԶԱՊԵՍ ՄԵՐ ՈՎ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՐԴՅՈ՞Ք ԲՈԼՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ:

ԵՐԲ ՄԱՐԴԻԿ
ԱՆՀԱՏՆԵՐԻ ԿԱՄ
ԽՄԲԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ ԵՆ
ԱՆՈՒՄ ՆՐԱՆՑ ԿՐՈՆԻ
ԿԱՄ ԴԱՎԱՆԱՆՔԻ,
ՄԱՇԿԻ ԳՈՒՅՆԻ,
ՆՐԱՆՑ ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԻ,
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ,
ՍԵՌԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ, ԿԱՄ
ՈՐԱԷ ԱՅԼ ԱՆՁՆԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆԻՇԻ ՊԱՏՃԱՌՈՎ,
ԴԱ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ Է:

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ «ԶՈՒՏ ԽՈՍՔԵՐԸ». ԱՆՑԱՆՑ ԵՎ ԱՌՑԱՆՑ

Ատելությունը կարող է հաղորդվել հեռուստատեսությամբ, լրագրերում, հանրային հավաքույթներում, դպրոցում, աշխատավայրում կամ հարևանությամբ, փողոցում կամ ընտանիքներում, այն նաև կարող է հայտնվել առցանց՝ վեբկայքերում, հավելվածներում, բլոգերում, սոցիալական մեդիայում, կամ էլեկրոնային նամակում, կամ առցանց զրույցում (չեթ): Ինտերնետը կարող է դառնալ շատ թշնամական, երբ ատելությունը հայտվում է տեսանյութերում և լուսանկարներում, երգերում ու մուլտֆիլմերում, մանիպուլացվող պատկերներում և այլն:



ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՍՊԱՌՆԱԼԻՔ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ եւ իրավունքներով:»

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 1

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը երաշխավորում է հավասարություն և խտրականության արգելում բոլոր մարդկանց համար: Արժանապատվության պաշտպանությունը, առանց խտրականության, այն է, ինչը մեզ պաշտպանում է ատելության խոսքից: Դա նշանակում է, որ ատելության խոսքը սպառնալիք է մարդու իրավունքների համար, և պետությունների մեծ մասում ատելության խոսքի ծանր ձևերը անօրինական են:

Ի՞ՆՉ Է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր մարդիկ իրավունքներով հավասար են: Խտրականությունը հավասարության հակառակն է: Երբ որևէ մեկին ցուցաբերվում է տարբերակված վերաբերմունք առանց օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման, դա խտրականություն է: Ատելության խոսքն ուղղված է մարդկանց դեմ, որպես անհատների կամ խմբերի, նրանց ով լինելու պատճառով: Այն օտարացնում, մարգինալացնում և վնասում է անձնական արժանապատվությունը, հաճախ այն մարդկանց դեպքում, ովքեր արդեն խոցելի են շատ այլ ձևերով:
Մտապահեք՝ խտրականության բոլոր ձևերը չէ, որ դրսևորվում են ատելության խոսքի միջոցով, սակայն ատելության խոսքը գրեթե միշտ հիմնված է խտրականության վրա, այն ենթադրության վրա, որ որևէ անձ կամ անձանց խումբ ավելի բարձր դիրք ունի մյուսների նկատմամբ:



ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

«Արտահայտվելու ազատության եւ ատելության խոսքի միջեւ մի նուրբ սահման կա: Ազատորեն արտահայտվելու իրավունքը խրախուսում է քննարկում, մինչդեռ ատելության խոսքը հրահրում է բռնություն»:

Նյուտոն Լի, Հակաահաբեկչական գործողություններ և կիբերանվտանգություն. լիարժեք տեղեկացվածություն

Երբ ասում ենք ազատորեն արտահայտվելու իրավունք, հիմնվում ենք այն փաստի վրա, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ կերպով արտահայտելու իրավունք, տեղեկություններ և գաղափարներ տարածելու և ստանալու ազատություն: Ազատորեն արտահայտվելու իրավունքը մարդու իրավունք է, որն, օրինակ, ներառված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում: Այս իրավունքը ժողովրդավարական հասարակության կարևոր հիմքն է և կարևոր է յուրաքանչյուր անհատի ինքնահիրացման համար:
Ազատորեն արտահայտվելու իրավունքը ներառում է գաղափարներ արտահայտելու իրավունք, որոնք կարող են համարվել քննադատական, տհաճ, վիրավորական կամ հակասական: Սակայն ազատորեն արտահայտվելու իրավունքը անսահմանափակ չէ: Պետությունները մյուս մարդկանց իրավունքները պաշտպանելու նպատակով կարող են սանկցիաներ կիրառել, կամ կանխարգելել արտահայտման այնպիսի ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում, կամ արդարացնում են ատելությունը: Պետք է լինի հավասարակշռություն՝ մի կողմից հնարավորություն տալով մարդկանց արտահայտել իրենց մտքերը, և մյուս կողմից՝ երաշխավորելով որ դրանով չեն վնասում այլոց իրավունքներին կամ դա չի հանգեցնում անկարգությունների կամ հանցագործությունների:

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ ՈՐԵՎԷ ԽՄԲԻ. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ԿԱՐՈՂ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԹԻՐԱԽ ԼԻՆԵԼ



«Անկախ նրանից, թե աշխարհի որ մասից ենք, մենք բոլորս հիմնականում նույն մարդիկ ենք: Բոլորս ձգտում ենք երջանկության եւ փորձում ենք խուսափել տառապանքներից: Մենք ունենք նույն հիմնական մարդկային կարիքներն ու մտահոգությունները..»
Դալայ Լամա

Թեև ատելության խոսքի թիրախ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք, Եվրոպայում կան մի քանի խմբեր, որոնք թիրախավորվում են կանոնավոր կերպով, օրինակ՝ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, մահմեդական, հրեական կամ այլ կրոնական խմբերը, կանայք, ներգաղթյալները և էթնիկական փոքրամասնությունները, գնչուները, աղքատության մեջ ապրող մարդիկ, հաշմանդամություն ունեցողները, և այլն: Թիրախավորվող խմբերն ամեն երկրում տարբեր են: Ատելության խոսքն ունի էական և լայնածավալ հետևանքներ առանձին զոհի, թիրախում հայտնված խմբի և այլ խոցերի խմբերի, ինչպես նաև ընդհանուր առմամբ համայնքի համար: Մարդիկ կարող են նաև թիրախ դառնալ մեկից ավելի հատկանիշների հիման վրա, օրինակ՝ որպես կին և ներգաղթյալ:

Եկեք դիտարկենք մեկ օրինակ: ՔՈՎԻԴ-19 համավարակն առաջացրել է ատելության խոսքի, խտրականության և խարանման նոր ալիք: Համավարակի սկզբում, էթնիկ չինացի կամ ասիացի ընկալվող անհատներին մեղադրում էին վիրուսի տարածման մեջ: Համավարակը նաև ստեղծեց խոցելի նոր խմբեր՝ անձինք, որոնք վարակված են կորոնավիրուսով, ենթարկվում են սոցիալական բացառման, մեկուսացման, խարանման և ատելության խոսքի:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ, ՈՐՈՆՔ ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՅԵԼՈՒՄ ՄԵԴԻԱՅՈՒՄ՝ ԱԶԴԵՑԻԿ ՄԱՐԴԻԿ/ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Որպեսզի մարդկանց մի ողջ խումբ սկսի ատել, անհրաժեշտ է նրանց համոզել, որ մեկ այլ մարդ կամ մարդկանց խումբ չար է կամ վտանգավոր: «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ» պաստառից

Երբ մտածում ենք ատելության խոսքի մասին, պետք է մտածենք անհատների, խմբերի կամ ամբողջ հասարակության վրա դրա ազդեցության և վնասի մասին: Այս ազդեցությունն ուժեղանում է հանրային ասպարեզում, քանի որ հասարակական գործիչները ազդեցություն ունեն լայն լսարանի վրա: Սա է նաև պատճառը, որ նրանք պարտավոր են զերծ մնալ ատելության խոսքից ու խարանող լեզվից և դատապարտել ուրիշների կողմից ատելության խոսքի կիրառումը:

Ատելության խոսքի ցանկացած տեսակ պետք է որոշակի չափով վնասակար ճանաչվի, մինչդեռ կան դեպքեր, որոնք կարող են վատթար լինել: Օրինակ, այն կարող է լինել ավելի վիրավորական, ազդել ավելի մեծ թվով մարդկանց վրա և պոտենցիալ ավելի վնասակար լինել, պարզապես այն պատճառով, որ արտահայտվել է մարդկանց կողմից, որոնք ունեն ավելի լայն լսարան սոցիալական մեդիայի հարթակներում: Այս մարդիկ կարող են օգտագործել ատելության խոսքը և ներգրավվել նոր մարդկանց կամ ձեռք բերել նոր հետևորդներ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՎԱՏԻՑ՝ ՎԱՏԹԱՐ

Դիտարկեք հետևյալ օրինակները: Արդյոք դրանք ծանո՞թ են ձեզ ձեր համատեքստում: Կարո՞ղ եք հիշել ատելության խոսքի օրինակներ ձեր երկրում: Որո՞նք են թիրախային խմբերը: Ի՞նչ ազդեցություն ունի ատելության խոսքը:

«Նրանք ներդրելու այլ բան չունեն՝ ավելի շատ հանցագործությունների և բռնաբարությունների ապացուցույց հանդիսացող փաստաթղթերից բացի»:

Մեկնաբանություն Եվրոպայում 2015թ. փախստականների ճգնաժամի վերաբերյալ մի առցանց հոդվածի առնչությամբ: 622 մարդ հավանել է այն, եւ շատ ավելի մարդ՝ դիտել:

«Հիտլերը բավարար չի սպանել նրանց»:

Իր քաղաքում գնչու բնակչության մասին հրապարակային հայտարարություն համայնքապետի կողմից:

«Պետք է պայքարել և դադարեցնել համասեռականությունը, որը զզվելի հիվանդություն է»:

300 անդամ ունեցող ֆեյսբուքյան խմբից

«Ոչ ոք ձեզ՝ հրեաներ, չի հրավիրել մեր երկիր: Ուստի, ինչու՞ պիտի ստիպեք մեզ վատ զգալ»:

Մեկնաբանություն բլոգում մի հրապարակման տակ: Բլոգի հրապարակումը ցավով հայտնում էր Հոլոքոստի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի նկատմամբ բարբարոսության մասին:

«Կանայք պետք է ավելի քիչ վաստակեն, քան տղամարդիկ, քանի որ նրանք ավելի թույլ են և ոչ այնքան խելացի»:

Եվրոպական խորհրդարանի անդամ

ԻՆՉՈՒ Է ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՔԱՐԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ

«Ես որոշել եմ սիրուց կառչել: Ատելությունը չափազանց ծանր բեռ է՝ տանելու համար»:

Մարթին Լյութեր Քինգ, կրտսեր

Ինչու՞ պետք է ինչ-որ բան ձեռնարկենք ատելության խոսքի դեմ: Ահա մի շարք պատճառներ՝

- **մարդու իրավունքների լուրջ խախտումները կանխարգելելու համար,**
- **խաղաղ, ներառական, ժողովրդավարական եւ արդար հասարակություններ խթանելու համար,**
- **կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին նպաստելու համար,**
- **զինված հակամարտությունները, վայրագություններն ու այլ հանցագործությունները կանխելու համար:**

Ատելության խոսքի դեմ պետք է պայքարել ոչ միայն այն ժամանակ, երբ այն արտահայտվում է (ցույց է տալիս իր դեմքը), այլև նրա արմատների մոտ: Այլ բառերով ասած՝ հասարակության մեջ տարբեր խմբերի միջև առկա վերաբերմունքի և փոխհարաբերությունների մակարդակում: Ատելությունը բարգավաճում է ռասիստական վերաբերմունքի, սեքսիզմի և բացասական կարծրատիպերի պատճառով: Եթե այն չվիճարկվի, կարող է հետ վերադառնալ դեպի հասարակություն՝ ամրապնդելով կարծրատիպերը և հետագա չարաշահումները, այդ թվում՝ որոշ դեպքերում, ֆիզիկական բռնությունը դարձնելով ավելի հավանական: Այս վերջին դեպքում ատելության խոսքը կարող է փոխակերպվել ատելության շարժառիթով կատարված հանցագործության: Մարդու իրավունքների զանգվածային խախտումները, ինչպիսիք են ցեղասպանությունը և էթնիկ զտումը, նախորդվում կամ ուղեկցվում են ատելության խոսքով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. Ո՞ՒՐ Է ՏԱՆՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Ատելության բուրգը երբեմն օգտագործվում է բացատրելու ատելության խոսքի հետևանքները և նաև, թե ինչու է անհրաժեշտ կարգավորել դրա տարբեր ձևերը՝ ժողովրդավարական արժեքներին աջակցելու և բռնությունը կանխելու համար: Մտածեք ձեր համատեքստի մասին. արդյո՞ք այս բուրգից ատելության խոսքի որևէ ձև ճանաչելի է:



Աղբյուրը՝ Զրպարտության դեմ պայքարի լիգա

ԿԱՆԳՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ

«Իսկ ինչու՞ինքներս մեզ չենք տեսնում՝ ելնելով մեր արտաքին տեսքից, դավանած կրոնից, կամ նրանից, թե որտեղ ենք ապրում ... այլ տեսնում ենք ելնելով այն բանից, թե ինչն ենք գնահատում. մարդկություն, բարություն, փոխկապակցվածության բնածին զգացում: Եվ այն համոզմունքը, որ մենք ոչ միայն մեր տան եւ մեր մոլորակի, այլեւ միմյանց պահապաններն ենք»:

Ջասինդա Արդերն, Նոր Զելանդիայի վարչապետ



Յուրաքանչյուրը կարող է ոտքի կանգնել ընդդեմ ատելության, եկեք տեսնենք, թե ինչպես:

Ատելության խոսքի դեմ պայքարը սիրով, կարեկցանքով, ապրումակցումով և ուժով գուցե լիարժեք կերպով արմատախիլ չի անի այն, սակայն որքան ավելի շատ քայլեր կարողանանք անել մարկանց կրթելու և աջակցելու, անարդարության մասին բարձրաձայնելու և այն դատապարտելու ուղղությամբ, այնքան ավելի լավը կդառնա այս աշխարհը: Եթե մենք միասնաբար հակազդենք ատելության խոսքին, այն նորմ չի դառնա:

ՄԻԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԵՆՔ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ



Որոշ մարդիկ կանխում են ատելությունը, որովհետև օգնում են հայմանքներին համախմբվել, ճանաչել միմյանց ավելի լավ և ապրել միասին հարգանքի միջավայրում: Մյուսներն ատելության խոսքին արձագանքում են հակափաստարկներ ներկայացնելով: Ուրիշները կրթում են երիտասարդներին՝ հարգանքով վերաբերվելու տարբերությունների նկատմամբ: Որոշ մարդիկ համերաշխություն են դրսևորում և աջակցում հարձակման ենթարկված խմբերին: Մյուսները՝ ատելության դեմ հանդես են գալիս հակադրվող պատմություններով: Որոշ կազմակերպություններ մշտադիտարկում են ատելության խոսքը: Որոշ մարդիկ ատելության խոսքի հետ կապված հայց են ներկայացնում դատարան: Մի շարք հաստատություններ կարող են տուգանք կիրառել հեռուստատեսային այն կայանների և նույնիսկ սոցիալական մեդիայի նկատմամբ, որոնք ատելության խոսք են տարածում: Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ հաճախ կան գործողություններ, որ մարդիկ կարող են ձեռնարկել ատելության խոսքի դեմ, նույնիսկ նախքան դա կպատահի:

Ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով մենք բոլորս պետք է աշխատենք միասին՝ քաղաքական գործիչները, քաղաքացիական հասարակությունը, կրթության, մեդիայի, կրոնի և հավատամքի, երիտասարդական հատվածների, ոստիկանության և այլ ոլորտներում ներգրավվածները:

Քաղաքացիական հասարակությունը հաճախ է գտնվում առաջնագծում՝ անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի նախնական նշանները ճանաչելու և դրանց դեմ պայքարելու առումով: Քաղաքացիական հասարակությունը՝

- **կառավարություններին կոչ է անում պայքարել ատելության խոսքի դեմ, օրինակ՝ օրենքները կատարելագործելու միջոցով**
- **հաղորդում է ատելության խոսքի կիրառման դեպքերի մասին**
- **բարձրաձայնում է զոհերի խնդիրները եւ նրանց տրամադրում իրավաբանական խորհուրդներ եւ խորհրդատվություն**
- **կրթում է, բարձրացնում իրազեկվածության մակարդակը եւ ատելության խոսքի դեմ պայքարի արշավներ իրականացնում:**

ՀԱԿԱԶԴԵԼՈՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆԸ

«Մենք կարող ենք միմյանց հետ չհամաձայնվել, եւ այնուամենայնիվ շարունակել սիրել իրար, եթե ձեր անհամաձայնությունն արմատավորված չէ իմ կեղեքման եւ մարդկության ու գոյության իրավունքի մերժման մեջ»:

Ջեյմս Բոլդվին

Մենք պետք է հիշենք, որ մարդու իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկապակցված, փոխկախված և անփոխարինելի յուրաքանչյուր մարդկային էակի համար, նույնիսկ նրանց, որոնք ատելության խոսք են կիրառում կամ խթանում: Նաև պատահում է, որ մարդիկ ասում են բաներ, հատկապես առցանց, առանց պատշաճ կերպով կշռադատելու, կամ վիրավորանք հասցնում՝ առանց նման նպատակ ունենալու, և հետո զղջում դրա համար և գուցե նույնիսկ հետ վերցնում իրենց բառերը: Սակայն այլ դեպքերում ատելության խոսքը տարածվում է կամովին, օրինակ՝ որպես ատելություն սերմանող արշավների բաղադրատարր:

Մենք պետք է հիշենք, որ ատելության խոսքին յուրաքանչյուր անգամ արձագանքելիս անպայմանորեն պետք է ընդունել, որ «ատելությունը» տարածական սպեկտր ունի : Դա նշանակում է, որ թեև ատելություն սերմանող բոլոր արտահայտությունները կարող են լինել վնասակար որոշ չափով, դրանցից մի դեպքը այնուամենայնիվ կարող է լինել ավելի վատթար մյուսի համեմատությամբ (հաճախ վիրավորական՝ ազդելով ավելի մեծ թվով մարդկանց վրա, ավելի բորբոքող, ավելի շատ վնասելու հավանականություն ունեցող և այլն): Ատելության խոսքին ուղղված արձագանքներում պետք է հաշվի առնվեն արտահայտված ատելության տարբեր աստիճանները:

Միևնույն ժամանակ, երբ մենք արձագանքում ենք ատելության խոսքին, պետք է համոզված լինենք, որ մեր փաստարկները չեն նսեմացնում որևէ այլ մարդու իրավունքները և չեն անմարդկայնացնում ուրիշներին: Ատելությանը ատելությամբ պատասխանելը խնդիրը չի լուծի:

10 ՕԳՏԱԿԱՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Մենք բոլորս ենք ծնվում ագրեսիայի եւ կարեկցանքի կարողությամբ: Թե ո՞ր միտումներն ենք ընտրում, կախված է անհատների, ընտանիքների, համայնքների եւ առհասարակ մեր մշակույթի խոհեմ ընտրությունից: Ատելության հաղթահարման բանալին կրթությունն է՝ տանը, դպրոցում եւ համայնքում»:
Հոգեբան Բեռնար Գոլդեն

Ի՞նչ կարող եք անել, երբ բախվել եք ատելությամբ լի որևէ հաղորդագրության: Ո՞ր ռազմավարությունը կաշխատի, և որը՝ ոչ: Ինչպե՞ս եք արձագանքում: Ծանոթացեք ստորև մի շարք օգտակար քայլերի, որոնց պետք է հետևել:

• ԿԵՑՎԱԾՔ ԸՆԴՈՒՆԵՔ ԵՎ ՀԱՍԿԱՑՐԵՔ, ՈՐ ՀԱՄԱԶԱՅՆ ՉԵՔ :

Ցույց տվեք, որ կան մարդիկ, ովքեր չեն հանդուրժի նման հայտարարություններ: Լռելը կարող է նշանակել, թե դուք համաձայն եք դրանց հետ, ուստի ատելությունը կշարունակի տարածվել ... Հատկապես եթե դուք ճանաչում եք ատելության խոսք օգտագործած անձին, ապա միշտ էլ կարող եք հարցնել, թե ինչու է ինչ-որ մեկը նման բաներ ասում: Հարցեր տալը ստիպում է մարդուն մտածել իր հայտարարությունների մասին:

• ԿԻՐԱՌԵՔ ՉՎԻՐԱՎՈՐՈՂ ԼԵԶՈՒ, ԵՐԲ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՔ, ԵՎ ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ԱՅՆ ՁԵՎՈՎ ՈՒ ՏՈՆԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ԻՆՉՊԻՍԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ Է:

Որքան էլ որ շատ եք ուզում, երբեք վրեժխնդիր մի եղեք կամ մի արձագանքեք անպատշաճ կերպով, նույնիսկ, երբ իրավիճակը հատկապես ցավոտ է: Թիրախավորեք ոչ թե հեղինակին, այլ ավելի շուտ հայտարարության բովանդակությունը:

• ԿԱՐԵԿՑԱՆՔ ԴՐՍԵՎՈՐԵՔ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԹԻՐԱԽՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

Ցույց տվեք, որ կարծում եք, որ ատելության խոսքը կոպիտ է ու վիրավորական: Բացի տուժողին աջակցելուց ձեր ուղերձը կարող է նրանց խրախուսել՝ գիտակցել, որ իրենք չպետք է ընդունեն ատելությունն ու պետք է դրա մասին հաղորդում ներկայացնեն պատկան մարմիններին:

• ՃՇՏԵՔ ԿԵՂԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Այն դեպքերում, երբ ունեք հնարավորություն ավելացնելու ճիշտ տեղեկությունները, արեք դա և ապացուցեք պնդումների կեղծ լինելը փաստերի միջոցով: Դա կարող է չհամոզել ատելությամբ լցվածին, բայց դուք կարող եք համոզել այլ ունկնդիրների կամ ընթերցողների:

• ՀԵՌԱՑՐԵՔ, ԵԹԵ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է:

Անկախ նրանից, թե նախընտրում եք ուղղակիորեն արձագանքել, թե՝ ոչ, դուք միշտ էլ կարող եք հաղորդում ներկայացնել ատելություն սերմանող առցանց բովանդակության հրապարակման վերաբերյալ, կամ հեռացնել նյութը, հատկապես ձեր սեփական պատից կամ էջից: Հաղորդեք դրա մասին առցանց հարթակին (սոցիալական մեդիա, ֆորումներ): Եթե նրանք չիմանան այդ մասին, ոչինչ չեն կարող անել դրա հետ կապված: Խուսափեք այն վերահրապարակելուց, քանի որ դրանով դուք միայն ավելի կտարածեք և լայնորեն տեսանելի կդարձնեք ատելություն պարունակող հաղորդագրությունը:

• ՄԻ ԿՈՐՍՎԵՔ ԱՆՎԵՐՁ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ :

Արտահայտեք ձեր անվստահությունն ու դժգոհությունը և հավատարիմ մնացեք հանգիստ ձևակերպումներին՝ հակիրճ, բայց հզոր:

• ՍՈՎՈՐԵՔ ԵՒ ԽՈՍԵՔ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐԱՌՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ :

Որքան ավելի շատ կրթվեն մարդիկ այս խնդիրների շուրջ, այնքան ավելի շատ կկարողանանք կանխարգելել ատելության խոսքը:

• ԿԱՄԱՎՈՐԱԳՐՎԵՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԵՂԵՔ :

Միացեք առցանց համայնքներին կամ կազմակերպություններին, որոնք խթանում են մարդու իրավունքները: Ստուգեք, թե արդյոք ձեր համատեքստում կան կազմակերպություններ, որոնք աշխատում են, օրինակ, հանուն ներառման, ժողովրդավարական արժեքների և խաղաղության, կամ պայքարում են ռասիզմի, սեքսիզմի ու խտրականության դեմ, և միացեք նրանց ջանքերին:

• ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ :

Եթե վերոնշյալ քայլերից ոչ մեկն օգտակար չէ, և դուք վտանգված եք զգում ձեր անվտանգության ու կյանքի հետ կապված, հաղորդում ներկայացրեք ատելության խոսքի վերաբերյալ պատկան մարմիններին:

• ՄԻ ԿՈՐՑՐԵՔ ՀՈՒՅՍԸ :

Ատելության արմատները խորն են և ուժեղ, և որքան էլ ջանաք, ատելության խոսքի ռիսկը առկա է: Կարևորը գործելն է և միանալը մյուսներին, ովքեր աշխատում են միևնույն խնդրի լուծման ուղղությամբ:

Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

«Եվրոպայի խորհրդի նպատակն է՝ հասնել ավելի սերտ միասնության իր անդամների միջև ...»
Եվրոպայի խորհրդի կանոնադրություն, հոդված 1

1949 թվականին հիմնադրված Եվրոպայի խորհուրդն ունի 47 անդամ պետություն: Այն խթանում է ընդհանուր և ժողովրդավարական սկզբունքներ, որոնք հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և մարդու իրավունքների վերաբերյալ այլ կոնվենցիաների ու փաստաթղթերի վրա:

Ատելության խոսքի հետ կապված Եվրոպայի խորհուրդը.

- Ընդունել է մարդու իրավունքների չափորոշիչներ, իսկ նրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է ատելության խոսքի կիրառման մի շարք դեպքեր՝ ստեղծելով այս թեմայի վերաբերյալ դատական նախադեպեր, որոնք կիրառելի են նրա բոլոր անդամ պետությունների համար.
- Նրա տարբեր մարմիններն ընդունել են առաջարկություններ և ուղեցույցներ՝ օգնելու երկրներին պայքարել ատելության խոսքի դեմ և աջակցել դրա զոհին, այն ատելության խոսքի սահմանումն ընդունել է դեռևս 1997 թվականին.
- Մշտադիտարկում է ռասիզմի, այլատյացության, հակասեմիտականության, անհանդուրժողականության և խտրականության հետ կապված խնդիրներն անդամ պետություններում Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ). աշխատանքի միջոցով: ՌԱԵՀ-ը հրապարակել է Ընդհանուր քաղաքականության թիվ 15 Հանձնարարականը ատելության խոսքի դեմ պայքարի մասին, որով անդամ պետություններին ուղեցույցներ է տրամադրում այս խնդրի դեմ պայքարելու համար.
- Աջակցում է քաղաքականության մշակմանը և վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում ազգային ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության համար՝ ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, օրինակ Ոչ ատելության խոսքին և համագործակցության ստորաբաժանմանաշխատանքի միջոցով: Կազմակերպում է արշավներ և կրթական միջոցառումներ՝ ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով, ինչպիսին օրինակ «Ոչ ին» համաեվրոպական երիտասարդական շարժումն է.

Եվրոպական միությունն և Եվրոպայի խորհուրդը իրենց համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» և «Հորիզոնական հնարավորություններ Արևմտյան Բալկանների և Թուրքիայի համար» ծրագրերի միջոցով աջակցում են շահառուներին առաջ բերելու մի շարք բարեփոխումներ խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարելու, ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացման ու զոհերի համար փոխհատուցման և թեմայի շուրջ հասարակության իրազեկման բարձրացման հարցերում:

- Մշակում է կրթական ձեռնարկներ, «էջանիշեր» և «ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ»-ը՝ մարդու իրավունքների կրթության և հակառակ ու այլընտրանքային պատմությունների (նարատիվների) միջոցով երիտասարդների հետ միասին ատելության խոսքի ուսումնասիրման և դրա դեմ պայքարի հետ կապված կրթության ոլորտում աշխատողներին աջակցելու համար.

- Աշխատում է խտրականության դեմ պայքարի ոլորտում ամենատարբեր տեսանկյուններից, ինչպես՝ կրթություն, սպորտ, գնչուների իրավունքներ, գենդերային հավասարություն, սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն, մեդիայի և ինտերնետի կառավարում, զբաղվածություն, պայքար սեքսիստական բնույթի ատելության խոսքի դեմ, և այլն:

Եվրոպայի խորհրդի «Ոչ ատելության խոսքին» համաեվրոպական երիտասարդական շարժումը համաեվրոպական արշավ էր, որի ընթացքում շատ մարդիկ և կազմակերպություններ իրականացրեցին կրթական միջոցառումներ երիտասարդների համար՝ ատելության խոսքի դեմ պայքարելու և մարդու իրավունքներն առցանց խթանելու նպատակով, կազմակերպեցին քննարկումներ իրավապաշտպան ակտիվիստների հետ այն մասին, թե ինչպես պայքարել ատելության դեմ, հաղորդումներ ներկայացրին սոցիալական մեդիային կամ իշխանություններին և կազմակերպեցին առցանց գործողությունների օրեր՝ մարդկանց տեղեկացնելու այն խմբերի մասին, որոնք ատելության խոսքի թիրախ են դառնում: Շատ կազմակերպություններ, որոնք ներգրավված էին այս արշավում, շարունակում են իրենց աշխատանքը, ինչպես օրինակ՝ «Ոչ ատելության խոսքին» ցանցը:

Ոգեշնչու՞մ եք փնտրում, թե ինչպես պայքարել ատելության խոսքի դեմ: Ծանոթացեք հետևյալ օրինակներին՝

www.coe.int/en/web/no-hate-campaign

Օգտակար հղումներ՝

Եվրոպայի խորհրդի վեբկայքը՝ www.coe.int

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով՝

www.coe.int/ecri

Եվրոպայի խոհրդի՝ Ներառման և խտրականության դեմ պայքարի հարցերով ստորաբաժանում՝

www.coe.int/en/inclusion-and antidiscrimination

Այս բրոշյուրն ուսումնասիրում է ատելության խոսք հասկացությունը, դրա դրսևորումները, մարդու իրավունքների և ժողովրդավարության հանդեպ ատելության խոսքի առաջացրած ռիսկերը: Սույն բրոշյուրը մշակվել է ցանկացած մարդու, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու այլոց համար, ովքեր կարիք են զգում ավելի լավ հասկանալու ատելության խոսքի ֆենոմենն ու ցանկանում են որևէ կերպ պայքարել դրա դեմ: Այս բրոշյուրը տրամադրում է ատելության խոսքի բացատրություններ, ինչպես նաև ատելության խոսքի կանխման և դրա դեմ պայքարի գործողությունների առաջարկություններ:

Այս բրոշյուրը մշակվել է Եվրոպական միություն և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող և ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն լավ կառավարման» և «Հորիզոնական հնարավորություններ Արևմտյան Բալկանների և Թուրքիայի համար» ծրագրերի, մասնավորապես՝ «Արևմտյան Բալկաններում բազմազանության և հավասարության խթանում» գործողության և «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար՝ արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի շրջանակներում : Դրանցում արտահայտված տեսակետները ոչ մի կերպ չեն արտահայտում երկու կողմերից որևէ մեկի պաշտոնական տեսակետը:

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքում մարդու իրավունքների առաջատար կազմակերպություններից մեկն է: Նրան են անդամակցում 47 անդամ պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ մի պայմանագիր, որը նախատեսված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է այդ Կոնվենցիայի կատարումը անդամ պետություններում:

www.coe.int

Եվրոպական միության անդամ պետությունները որոշել են միմյանց հետ կապել իրենց «նոու-հաուն», ռեսուրսները և ճակատագրերը: Նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը հանձն է առել իր նվաճումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe